




**ՄԱՅՐ ԱԹՈՒՍ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱՐԱԹԱԹԵՐԹ**

Գերագույն հոգեւոր խորհուրդը եւ եպիսկոպոսաց դասը հանդիպում ունեցան Հայաստանի Հանրապետության նախագահի հետ

Մայիսի 30-ին, հրավերով Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայաստանի Հանրապետության նախագահ Արմեն Սարգսյանն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ուր «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում տեղի ունեցավ հանդիպում Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների, հայաստանյան թեմերի առաջնորդների եւ Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսների հետ:

Հանդիպումն սկսվեց միասնական՝ Տերունական աղոթքով: Ողջունելով եւ շնորհակալություն հայտնելով ՀՀ նախագահին հանդիպման առիթով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նրան ներկայացրեց Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին եւ ԳՀԽ գործունեությունն ու եկեղեցական կյանքը կանոնակարգելու գործընթացում կարեւոր առաքելությունը:

Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ ՀՀ նախագահի անձը քաջածանոթ է ամենքին՝ հայրենիքին տարբեր հանգամանքներում իր նվիրյալ ծառայությամբ, նաեւ որպես Հայոց Եկեղեցու հավատավոր զավակ եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մեծ բարերար:

Նորին Սրբությունը ներկաների անունից գնահատանք հայտնեց նախագահ Սարգսյանին՝ վերջին ներհայաստանյան զարգացումների ժամանակ ստանձնած ներգործուն դերակա-



տարության եւ հոգեւորականաց դասի հետ ունեցած համատեղ ջնսարկումների համար, որպեսզի գործընթացներն առաջնորդվեն խաղաղ կարգավորման եւ հանգուցալուծման:

Այնուհետեւ ԳՀԽ անդամներին խոսքով դիմեց ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը՝ ուրախություն հայտնելով հանդիպելու հնարավորության համար: «Դուք համայնքներում ամեն

օր հանդիպում եք մեր ժողովրդի ներկայացուցիչներին. լինի Արցախում, Հայաստանի հյուսիսում, հարավում, լինի Լոս Անջելեսում, Փարիզում, Մոսկվայում կամ այլուր: Հետեւաբար, եկել եմ նաեւ ձեզանից լսելու, թե մեր ժողովուրդն ինչ է մտածում: Եկել եմ նաեւ ձեզ հետ երկխոսելու»,- ասաց ՀՀ նախագահը:

ՀՀ նախագահն անդրադարձ կատարեց Հայ Եկեղեցու դերակատարությանը հայ ժողովրդի ոգու եւ հավատի, ընտանեկան արժեքների եւ առ հայրենին սիրո պահպանության գործում: Տարբեր Արմեն Սարգսյանն արձանագրեց, որ Հայոց Եկեղեցին եւ հավատքը պետականության սյուներից են եւ ոչ միայն որպես ինստիտուտ, այլ նաեւ որպես մշակույթ՝ այն արժեքներով, որոնք Եկեղեցին դավանում է, որոնցով հարյուրավոր տարիներ պահվել է հայի ինքնությունը, պահպանվել է մշակույթը, կրթվել հայ մանուկները: Նախագահը նկատեց, որ այդ ամենի մեջ Եկեղեցու ներդրումը հսկայական է, եւ արժեք՝ աննկարագրելի:

Հանդիպմանը ՀՀ նախագահը պատասխանեց ԳՀԽ անդամների ու եպիսկոպոսաց դասի ներկայացուցիչների հարցերին, որոնք վերաբերում էին հայրենիքի եւ հայ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերներին ու խնդիրներին, Հայաստան-Սփյուռք կապերին, ներհայաստանյան իրավիճակին:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

29 մայիսի

Կիրակնօրյա դպրոցների աշակերտների



Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Հայ Եկեղեցու հայաստանյան թեմերի կիրակնօրյա դպրոցների սաներին՝ առաջնորդությամբ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանի:

Սրբազանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց 10-13 տարեկան շուրջ 100 սաների, ովքեր Մայր Աթոռ են եկել՝ մասնակցելու ԶԴԿ-ի կողմից կազմակերպված կիրակնօրյա վարժարանների սաների օլիմպիադայի հանրապետական փուլին:

Իր բարեմաղթանքն ու օրհնությունը փոխանցելով աշակերտներին՝ Վեհափառ Հայրապետը նշեց, որ կիրակնօրյա դասընթացների նպատա-

կը սաներին Աստծո ուղենշած ճանապարհով քայլել սովորեցնելն է, որպեսզի իրենց կյանքի ընթացքը լինի բարու, սիրո մեջ, եւ այդ զգացումներով արարեն, շնանցեն հայրենի երկիրը: Վեհափառի խոսքով՝ մեր հայրերի՝ Տիրոջ հանդեպ մեծ սիրո արտահայտություն են սքանչելի վանքերն ու եկեղեցիները, արժեքավոր ձեռագիր մատյանները: Նրանք ամեն ճիգ ու ջանք գործադրել են, որպեսզի Աստծուն ընծայաբերեն իրենց հոգուց լավագույնը: Ամենայն Հայոց Հայրապետը պատգամեց նույն այս ուժգնությամբ սիրել Աստծուն՝ շարունակելով մեր հայրերի նվիրական գործը: «Միայն այդպես մենք կարող ենք լինել երջանիկ, մեր երկիրը՝ հզոր: Աստծուց է ամեն բարիք ու երջանկություն:

մենք որքան ջերմ սիրենք Արարչին, այնքան բարիքները պիտի առատանան թե՛ մեր, թե՛ ազգային կյանքում»,- ընդգծեց Վեհափառ Հայրապետը:

Խոսելով Քրիստոսի՝ մանուկների նկատմամբ մեծ սիրո մասին՝ Վեհափառը սաներին հորդորեց աղոթքների, Աստծո հետ հաղորդակցության միջոցով միշտ պահպանել հոգու մաքրությունը:

Նորին Սրբությունն իր բարձր գնահատանքը բերեց նաեւ մասնավարժներին եւ ծնողներին, ովքեր աստվածահաճո գործ են կատարում՝ ե-

րեխաներին ուղղորդելով դեպի բարին, ազնիվը, մաքուրն ու գեղեցիկը, նրանց մեջ ամրացնելով սերը արարչության, մարդու նկատմամբ:

Օլիմպիադայի մասնակից աշակերտները ԶԴԿ-ի սարկավագների ուղեկցությամբ նաեւ այցելեցին Մայր տաճար, շրջեցին թանգարաններում: Օրվա ավարտին Էջմիածնի «Հրաչ եւ Սյուզան Թուֆայան» հայորդյաց տան սաների կողմից պատրաստված հանդիսությունից հետո պարգևատրվեցին օլիմպիադայի մրցանակակիրները:

6 հունիսի

Քահանայական ձեռնադրության դասընթացի սարկավագներին



Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Մայր Աթոռի տարբեր կառույցների եւ թեմերի՝ քահանայական ձեռնադրության պատրաստվող թվով 13 սարկավագի՝ ուղեկցությամբ իրենց կանանց:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռի լուսարարապետ Յովհանն եպս Հակոբյանը եւ Մայր Աթոռի ներեկեղեցական գրասենյակի տնօրեն Պարույր քհն. Ավետիսյանը, ովքեր Ամենայն Հայոց Կաթողիկոսին ներկայացրեցին առաջիկա քահանայական ձեռնադրության թեկնածուներին:

Շարունակությունը՝ էջ 2

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Քահանայական ձեռնադրության դասընթացի սարկավագներին

Սկզբը՝ էջ 1

Վեհափառ Հայրապետը հետաքրքրվեց սարկավագների ծառայության ընթացքով, կեցության պայմաններով, ինչպես նաև ծանոթացավ ապագա երեցկանանց հետ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունը փոխանցեց քահանայական ձեռնադրության պատրաստվող սարկավագներին՝ ուրախությամբ նշելով, որ մեծ գնահատանքի է արժանի նրանց որոշումն իրենց ծառայությունը՝ իբրեւ քահանա, Հայոց Եկեղեցու

անդաստանում շարունակելու վերաբերյալ: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ սարկավագները, արժանալիվ քահանայական օժան շնորհին, իրենց նվիրյալ սպասավորությամբ ավելի կգործեն հայ ժողովրդի հավատքը:

Վերջում Գարեգին Բ Հայրապետն ապագա քահանաներին մաղթեց ուժ, կորով եւ Սուրբ Հոգու առաջնորդությունն ու օգնականությունն իրենց հետագա սրբազան առաքելության մեջ:

7 հունիսի

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց 2018 թ. «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության մրցանակի հավակնորդներին՝ Զո Լա Աուսին (Մյանմա), Սունիտա Զրիշանին (Հնդկաստան) եւ Հեկտոր Թոմաս Գոնսալես Կաստիլյոյին (Մեքսիկա)՝ ուղեկցությամբ «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության համահիմնադիրներից մեկի՝ Նուբար Աֆեյանի եւ Հարութ Շիրիլյանի:

«Ավրորայի» երեք հերոսներին ներկայացնելով Հայոց Հայրապետին՝ Ն. Աֆեյանն ու Հարութ Շիրիլյանն անդրադարձան նրանց բացառիկ նվիրումին ու իրենց երկրներում իրականացվող անձնագոհ առաքելությանը:

Այնուհետեւ Նորին Սրբությունը բարձրորդեց գնահատեց «Ավրորա» նախաձեռնության առաքելությունը, նախաձեռնության բոլոր գորակիցներին՝ ի մասնավորի համահիմնադիրներին, ինչպես նաեւ իրենց ներդրումը բերած բոլոր այլ անձանց:

Դիմելով դափնեկիրներին՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետը մեծ գոհունակությամբ արձանագրեց վերջիններիս գովելի ծառայությունները՝ իրականացված Բարձրյալի պատվիրաններին եւ համամարդկային արժեքներին համահունչ, որոնցով ա-

«Ավրորայի» 2018 թ. հերոսներին



ջակցություն են ստանում կարիքավորներ, նեղյալներ, սովի ու տառապանքի մեջ հայտնված մարդիկ: Այս կապակցությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր օրհնությունն ու բարեմաղթանքները բերելով, փառք տվեց Բարձրյալին, որ մերօրյա հերոսների աշխատանքն ըստ արժանվույն գնահատվում է մարդասեր հանրության եւ կազմակերպությունների կողմից: Վեհափառ Հայրապետը նաեւ վստահություն հայտնեց, որ նրանք պետք է նույն նվիրումով, արիությամբ ու նախանձախնդրությամբ շարունակեն սատար կանգնել

անարդարության ճիրաններում տառապող մարդկանց:

Հայոց Հայրապետը հավելեց, որ այսօրինակ նախաձեռնությունները ոչ միայն խրախուսանքն ու գնահատանքն են նրանց կատարած աշխատանքի, այլեւ ներշնչանք, հրավեր եւ կոչ բոլոր մարդկանց՝ իրենց անսմացորդ սերն արտահայտելու նրանց նկատմամբ, ովքեր օգնության ձեռքի կարոտ են:

Հանդիպման ընթացքում սոցիալական արդարության իրենց ընկալումների, ինչպես նաեւ Հայաստան կատարած այցի մասին արտահայտվեցին մերօրյա հերոսները:

11 հունիսի

Ֆրանսիայի Շառլվիո Շավանիոյի Բաղաժառնգում



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Ֆրանսիայի Շառլվիո Շավանիոյի քաղաքապետ Ժերարդ Դեգամպի գլխավորած պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր ու-

րախությունը հայտնեց Շառլվիո Շավանիոյի եւ Էջմիածնի քաղաքների միջեւ ձեւավորված համագործակցության առիթով եւ մաղթեց, որ երկու քաղաքների կապերն առավել զորանան:

Գարեգին Բ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց Շառլվիո Շա-

վանիոյի հայկական համայնքի եւ քաղաքապետարանի միջեւ առկա սերտ հարաբերությունները, որոնք նպաստում են հայ-ֆրանսիական կապերի առավել զորացմանը: Այս կապակցությամբ Նորին Սրբությունը նշեց, որ Հայաստանում 2018 թ. անցկացվելիք՝ ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության գագաթնաժողովը լավագույն վկայությունն է այդ ջերմ հարաբերությունների:

Իր հերթին քաղաքապետ Ժերարդ Դեգամպը խորին շնորհակալություն հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ իրենց քաղաքի հայ բնակչության եւ հայկական եկեղեցու հանդեպ ցուցաբերած ուշադրության եւ խնամքի համար: Քաղաքապետը նաեւ ջերմությամբ անդրադարձավ իր նախորդ այցելությանը Մայր Աթոռ եւ իր կյանքում դրա ունեցած կարեւոր ներգործությանը:

Վերջում Վեհափառ Հայրապետն Աստծո օրհնությունն ու պահպանությունը հայցեց երկու բարեկամ ժողովուրդների բարօրության համար:

Արմավիրի մարզպետին



Սրբությանը ներկայացնելով առաջնահերթ ծրագրերը: Պրն Գագիկ Միրիջանյանը կարեւորեց տարբեր բնագավառներում գործակցությունը Հայոց Եկեղեցու հետ:

Վերջում, վերստին իր գնահատանքը բերելով մարզպետին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը նրան մաղթեց ձեռքբերումներ եւ հաջողություններ՝ ի նպաստ Արմավիրի մարզի:

Եպիսկոպոսաց Ժողովի հայտարարությունը

Հունիսի 8-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Եպիսկոպոսաց Ժողով, որին մասնակցում էին Հայաստանում պաշտոնավարող եպիսկոպոսները, ինչպես նաեւ՝ Գերագույն հոգեւոր խորհրդի աշխարհական անդամները:

Ժողովը հանդես եկավ հետեւյալ հայտարարությամբ.

«Վերջին օրերին որոշ անձեր հանդես եկան նախաձեռնությամբ՝ կազմակերպելով բողոքի ցույցեր, հրապարակումներ համացանցում եւ ելույթներ լրատվամիջոցներում, որոնցում մտահոգություն էին հայտնում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու առաքելությանն առնչվող մի շարք խնդիրների վերաբերյալ: Այս ընթացքում փաստագուրկ մեղադրանքներ եւ վերագրումներ կատարվեցին նաեւ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հասցեին՝ վերջնագրային եղանակով պահանջելով Նորին Սրբության հրաժարումը Ս. Գրիգոր Լուսավորչի գահից:

Անընդունելի է մտահոգությունների ներկայացման որդեգրված վերջնագրային ոճը, որ ներկայացվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ առաջադրված պահանջի տեսքով: Եպիսկոպոսաց դասը, իբրեւ հիմնական երաշխավորը Հայ Եկեղեցու կանոնական կարգի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանգամանքի անձեռնմխելիության, հաստատում է, որ կաթողիկոսի հրաժարականը՝ արտաքին եւ բռնի միջամտության միջոցով պարտադրված, հակա-կանոնական է, ուստի եւ անվավեր:

Մենք գիտակցում ենք Եկեղեցու ապագայի հանդեպ մեր պատասխանատվությունը եւ ժամանակակից կյանքի պայմաններին համարժեք՝ եկեղեցական կյանքի բարեփոխումները շարունակելու անհրաժեշտությունը:

Հարգանք դրսևորելով մեր Եկեղեցու նախանձախնդիր հավատացյալների ողջամիտ ակնկալություններին ու սպասումների նկատմամբ՝ Հայ Եկեղեցու կանոնական մարմինների՝ Գերագույն հոգեւոր խորհրդի, Եպիսկոպոսաց Ժողովի, Եկեղեցական-ներկայացուցչական Ժողովի, Ազգային-եկեղեցական Ժողովի շրջանակներում կշարունակենք ընկալել եւ արդյունավորել եկեղեցական բարեփոխումների գործընթացը՝ հավատացյալների հոգեւոր պահանջները առավելագույնս բավարարելու համար:

Առաջիկա կիրակի բարեկենդանն է ս. Գրիգոր Լուսավորչի պահքի, որին հաջորդելու է Լուսավորչի Նշխարների գյուտի տոնը: Սա հրաշալի առիթ է, որ պահեցողության այս օրերին ամենքս գործացնենք աղոթական մեր կյանքը՝ հոգեւոր խորհրդածությունների միջոցով համերաշխության ոգին ամրացնելու եւ սրբազան մեր առաքելությունն առավել արգասավոր դարձնելու համար:

Հրավիրում ենք մեր Եկեղեցու բարեպաշտ հավատացյալներին՝ աղոթական խաղաղ ու խոնարհ հոգով շարունակելու մնալ աստվածաշնչության մեջ եւ իրենց գործուն մասնակցությունը բերել մեր եկեղեցական կյանքին՝ ի պայծառություն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի փառս Աստծո:

Տեղ Զիսուս Զրիստոսի շնորհը, Աստծո սերը եւ Սուրբ Հոգու հաղորդությունը ձեզ հետ լինեն: Ամեն:

Սեպուհ արք. Գուլյան

Գուլյան արք. Գուլյան Գուլյան Գուլյան

Նավասարդ արք. Կոնյան

Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ

Աբրահամ արք. Մկրտչյան

Վայոց ձորի թեմի առաջնորդ

Նաթան արք. Զովհաննիսյան

Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն

Առաքել արք. Զարմայան

Կոտայքի թեմի առաջնորդ

Փառեն արք. Ավետիքյան

Սիոն եպս Աղամյան

Արմավիրի թեմի առաջնորդ

Միքայել եպս Աջապահյան

Շիրակի թեմի առաջնորդ

Բագրատ եպս Գալստյան

Տավուշի թեմի առաջնորդ

Արշակ եպս Խաչատրյան

Մայր Աթոռի դիվանապետ Անուշավան եպս Ժամկոչյան

Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորչի մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ

Արտակ եպս Տիգրանյան

Մայր Աթոռի վանորդի տեսուչ

Մկրտիչ եպս Պողոսյան

Արագածոտնի թեմի առաջնորդ

Մուշեղ եպս Բաբայան

Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն

Հովհան եպս Հակոբյան

Մայր Աթոռի լուսարարապետ

Վարդան եպս Նավասարդյան

Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն

Եպիսկոպոսների Ժողով Մայր Աթոռում

Հունիսի 11-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսների, հայաստանյան թեմերի առաջնորդների եւ առաջնորդական տեղապահների ժողով:

Ժողովի ընթացքում անդրադարձ կատարվեց հունիսի 10-ին Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորչի մայր եկեղեցում հրեթացս սուրբ Պատարագի տեղի ունեցած միջադեպին:

Հիշյալ հարցի վերաբերյալ արձանագրվեց. «Մեր ցավն ու վրդովմունքն ենք արտահայտում Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցում մի խումբ անձանց կողմից իրականացրած անընդունելի գործողությունների համար, որոնք խստորեն դատապարտելի են՝ անկախ շարժառիթներից: Արդարացում չունի որեւէ քայլ, որը խաթարում է հոգեւոր միջավայրի աղոթական անդորրը եւ վիրավորում հավատացյալների կրոնական զգացումները»:

Ժողովը նաեւ որոշեց շարունակել բոլոր միջոցները գործադրել՝ հնարավորություն ընձեռելու նախաձեռնության անդամներին վերադառնալ կանոնական դաշտ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՃ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՉԸ

Մտահոգված ենք այս օրերին Ստեփանակերտում տեղ գտած իրադարձություններով, որոնք հուզումների պատճառ են դարձել՝ վտանգելով Արցախի ներքին կայունությունը։ Երկրում ներքաղաքական իրադրության սրացումը, անգիջում դիրքորոշումները անթույլատրելի են, քանզի դրանք կարող են խոցելի դարձնել Արցախի ապահովությունն ու խաղաղությունը։

Հորդորում ենք Արցախի Մեր սիրելի զավակներին՝ համերաշխության ու եղբայրսիրության ոգով եւ երկխոսության ճանապարհով լուծել բոլոր տարաձայնություններն ու խնդիրները՝ հանուն Արցախի կայունության ու առաջընթացի։ Պողոս առաքյալի հորդորի համաձայն՝ եղբայրսիրության մեջ եղեք գթասիրտ, պատիվ տալու մեջ միմյանց գերազանցեք։

Աղոթում ենք, որ Աստված խաղաղ ու անսասան պահի ու պահպանի Արցախի Հանրապետությունը եւ Իր առատ օրհնությունները հեղի արցախահայության կյանքից ներս։ ամեն։

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարված միաբանական ժողովը հանդես եկավ հայտարարությամբ

Հունիսի 5-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ միաբանական ժողով, որին մասնակցում էին նաեւ Մայր Աթոռում պաշտոնավարող քահանաները։

Ժողովի մասնակիցները հանդես եկան հետեւյալ հայտարարությամբ.

«Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ, սիրելի՛ հավատավոր ժողովուրդ,

Վերջին օրերին համացանցում հայտնվել են նախաձեռնություններ եւ բողոքի կոչեր, որոնք հասցեագրված են Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանությանը։ Ցավում ենք, որ դրանց միացել են նաեւ հավատավոր զավակներ, ովքեր անկեղծորեն մտահոգված են մեր Եկեղեցու առաքելությանը։

Անուրանալի են անկախությունից ի վեր հայոց հայրապետների եւ ուխտապահ հոգեւորականների ջանքերով կատարված աշխատանքները եւ արձանագրված ձեռքբերումները հովվական, քարոզչական, կրթական, սոցիալական, բարեսիրական եւ մեր ազգային կյանքի այլ ոլորտներում։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր ամենօրյա գործունեությամբ մշտապես հետամուտ է հոգեւոր կյանքի բարենորոգմանն ու

զարգացմանը՝ շարունակ ջանալով լուծել եկեղեցական կյանքում ի հայտ եկող խնդիրներն ու մարտահրավերները։

Ցավալի է, որ բողոքի հիշյալ գործընթացը խթանում են որոշ անհատներ, ովքեր իրենց անձնական շահերից ելնելով՝ փորձում են ստվերել ամենքիս համար գնահատելի եւ կենսական նշանակություն ունեցող այս ավանդը՝ խաթարելով սուրբ Եկեղեցու աղոթական կյանքը եւ զայրակրություն դառնալով բարեմիտ հավատացյալների համար։ Առավել եւս ցավում ենք, որ հանդես են գալիս նաեւ անձեր, ովքեր ժամանակին հնարավորություն ունեին իրենց ծառայության մեջ բարձրաձայնելու ու նպաստելու խնդիրների լուծմանը։

Մեր Եկեղեցու ներքին կյանքի խնդիրները լուծում են ստանում ըստ դարերով նվիրագործված ընթացակարգի՝ եկեղեցական կանոնական մարմինների միջոցով։ Խնդիրների լուծման կանոնական այլ ճանապարհներ եւ հարթակներ չկան։

Հորդորում ենք մեր սիրեցյալ հավատացյալներին եւ հոգեւոր եղբայրներին, որ նրանց երեսնակները խնդիրները համապատասխան կարգով բարձրաձայնեն իրենց հովիվների եւ ա-

ռաջնորդների առջեւ, իսկ երբ չգտնվեն լուծումներ, պատշաճ կերպով ներկայացնեն եկեղեցական բարձրագույն ատյաններին։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանական ժողովը համոզված է, որ Հայաստանյայց Սուրբ Եկեղեցուն հուզող ամեն մի խնդրի առնչությամբ կկայացվի համապատասխան որոշում՝ գոհացում տալով հավատացյալների սպասումներին եւ կարիքներին։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ողջ միաբանությունը հավատարիմ է սրբազան իր ուխտին եւ մեր Տեր Հիսուս Քրիստոսի կողմից ավանդված իր առաքելությանը՝ ի խնդիր հայ ժողովրդի բարօրության եւ հայրենի մեր երկրի զորացման։

Աղոթում ենք, որ ամենակալ Տերը խաղաղություն պարգևի ամենքիս, իմաստության շնորհով պայծառացնի մեր միտքը եւ պարգևի գոյություն՝ բարին խորհելու, խոսելու եւ գործելու։ Թող Տերն Իր ամենախնամ հովանու ներքո միշտ շեն ու հզոր պահի համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ մեր Հայոց աշխարհը։

«Աղոթություններ պտուղը խաղաղությամբ է սերմանվում նրանց համար, ովքեր խաղաղություն են անում» (Հակոբոս Գ. 18)։

Քահանայական ձեռնադրություն Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում

Հունիսի 10-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, քաղաքամայր Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում կատարվեց քահանայական ձեռնադրություն։ Հընթացս սուրբ եւ անմահ Պատարագի, ձեռամբ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթևի եպս Զակարյանի, քահանայական ձեռնադրության եւ օծման արժանացավ թվով 12 սարկավագ։ Պատարագի ընթացքում Տաթևի սրբազանը քահանայության կոչեց նորընծաներին՝ սրբալույս մյուռոնով օծելով քահանաների ճակատներն ու ձեռքերը եւ շնորհելով նրանց մայիսյան հերոսամար-

ուխտ կնքելով Աստծո առաջ՝ քառասուրյա պահեցողության, խոկման շրջանն անցնելուց հետո, 12 օձյալ քահանաները պիտի մուտք գործեն Հայ եկեղեցու սրբազան անդաստան՝ հովվելու, ծառայելու, սպասավորելու, միջնորդելու, ուսուցանելու, թողություն տալու, կապելու եւ արձակելու՝ Տիրոջից տրված բարձրագույն իշխանությամբ»։

Դիմելով նորընծաներին՝ սրբազան հայրը հավելեց. «Աստծո ծառա եւ սպասավոր անվանվելը մեծ պատիվ է եւ միեւնույն ժամանակ մեծագույն պատասխանատվություն։ Եթե պարզ մարդիկ պատասխանատու են եւ հաշվետու Աստծու առաջ

րեւ աղ, պիտի համեմեք մեր ժողովրդի կյանքը։ Տիրոջ խոսքի համաձայն՝ ձեզնից պահանջվում է անսասան հավատք, անմտադրող նվիրում եւ զոհաբերություն, քանզի առանց այս երեք անհրաժեշտ եւ հիմնարար գործոնների՝ դատապարտված պիտի լինեք ձախողման։ Պատրաստ եղեք անվերապահ հնազանդությամբ կատարելու ձեր հոգեւոր ծառայությունը, որտեղ էլ լինեք՝ աներկյուղ եւ անտրոսնչ պայծառացնելու մեր Ս. Եկեղեցին, լուսավորելու մեր ժողովրդին, որին ծառայելու բեռը եւ պատիվը այսօր դուք ստանձնեցիք։ Պատահական չէին նաեւ ձեզ տրված անունները. գտնվելով մայիսյան հերոսամարտի եւ Հայաստանի առաջին



տերին մասնակցած հոգեւորականների եւ աշխարհականների անուններ։ Գարուշ սրկ. Ասատրյանը վերակոչվեց Գեւորգ քահանա, Սամվել սրկ. Սարգսյանը՝ Գարեգին քահանա, Արթուր սրկ. Աբգարյանը՝ Աբգար քահանա, Արթուր սրկ. Խունյանը՝ Մեսրոպ քահանա, Արիստակես սրկ. Սարգսյանը՝ Անդրանիկ քահանա, Գրիգոր սրկ. Թիվիքյանը՝ Արամ քահանա, Արսեն սրկ. Մաթեոսյանը՝ Յովհաննես քահանա, Տիգրան սրկ. Մակարյանը՝ Ավետիս քահանա, Մարգար սրկ. Հագեյանը՝ Համազասպ քահանա, Արշակ սրկ. Յովհաննիսյանը՝ Սիմեոն քահանա, Յովհաննես սրկ. Թորգոմյանը՝ Եզնիկ քահանա, եւ Արմեն սրկ. Հայրապետյանը՝ Զավեն քահանա։

Ձեռնադրության ավարտին նորած քահանաներն իրենց անդրանիկ օրհնությունը փոխանցեցին ներկաներին։

Այնուհետեւ ձեռնադրող սրբազան հայրը, անդրադարձնալով քահանայության կարեւորությանը, իր քարոզում մասնավորաբար ասաց. «Այսօր՝ այս սրբազան պահին, ցնծություն եւ հրճվանք ենք ապրում բոլորս, քանզի քիչ առաջ, ներկայությամբ ազգիս Վեհափառ Հայրապետի, եպիսկոպոսը, քահանայից, սարկավագաց դասի եւ մեր Սուրբ Եկեղեցու զավակաց, քահանայագործության կոչվեց 12 սարկավագ։ Հնազանդության



յուրաքանչյուրն իր ոգու եւ իր արարքների համար, ապա դուք այսուհետ պատասխանատու եք ձեզ վստահված հոտի ամեն մի անդամի համար։ Աստված ձեզանից հաշիվ է պահանջելու ամեն մի կրթության անձի համար, ամեն մի կորսված հոգու համար, որին կարող էիք դարձի բերել եւ ուղղորդել դեպի Քրիստոս, որն է ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը։ Դուք եք, որ այսուհետ ս. Ավագանի մկրտությամբ երկրորդ ծնունդ պիտի պարգեւեք մեր զավակներին, խավարի մեջ նստողներին դեպի լույս պիտի առաջնորդեք եւ, իր-

Հանրապետության 100-ամյա հոբելանական տարում՝ մեր տեսլականն էր ձեզ օծել այն հոգեւորականների եւ աշխարհականների անուններով, որոնք հերոսացան, իրենց անձը, եսը եւ շահը զոհաբերեցին վասն հավատի եւ վասն հայրենյաց»։

Այս կապակցությամբ Տաթևի եպիսկոպոսն Իր որդիական խոնարհումը բերեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին՝ իրեն բարձրագույն պատվի արժանացնելու համար, նաեւ շնորհավորեց Մայր Աթոռի միաբանությանը, նորածների ընտանիքների անդամներին եւ համայն հայությանը՝ Հայ Եկեղեցու անդաստանը 12 նոր մշակով համարվելու առնչությամբ։

Ապա, գլխավորությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր Աթոռի միաբանները եւ ներկա հոգեւորականաց դասը բարձրացան ս. Խորան, շնորհավորեցին քահանաներին եւ համբուրեցին վերջիններիս մյուռոնաբույր ճակատներն ու ձեռքերը՝ ստանալով անդրանիկ «Ողջույնը»։

Նորաձեռնադրյալ 12 քահանաները Մայր Աթոռ Ս. Էջմիածնում կանցկացնեն քառասուրյա պատրաստության եւ աղոթքի շրջան, որից հետո ծառայության կկոչվեն Հայ Եկեղեցու տարբեր կառույցներում եւ թեմերում։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանական ժողովի հայտարարությունը

Սույն թվականի հունիսի 12-ին տեղի ունեցավ միաբանական արտահերթ ժողով, որին մասնակցում էին նաեւ Մայր Աթոռում պաշտոնավարող քահանա հայրերը։ Ժողովը հանդես եկավ հետեւյալ հայտարարությամբ.

«Խոր ցավով եւ վրդովմունքով անդրադարձանք հունիսի 10-ին Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում սուրբ Պատարագի ժամանակ բողոքի ակցիա կազմակերպած եկեղեցական ու աշխարհական անձանց անթույլատրելի գործողություններին։ Հայտնի գործող անձանց կողմից ոտնձգություն կատարվեց Եկեղեցու սրբության նկատմամբ, որն ուղեկցվում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Եկեղեցականների հասցեին ուղղված վարկաբեկիչ արտահայտություններով։ Նրանց կողմից փորձ արվեց խոչընդոտել սուրբ Պատարագի թափորի ընթացքը եւ խաթարել Եկեղեցում աղոթական մթնոլորտը։ Այս քայլն ուղղված է Մայր Եկեղեցու դեմ՝ վիրավորելով նրա բազմաթիվ հավատացյալների հոգեւոր զգացումները։ Փառք Աստծո, Եկեղեցականների եւ հավատացյալների միջամտությամբ հնարավոր եղավ խուսափել ընդհանուր միջ։

Խստորեն դատապարտում ենք կատարվածը եւ արձանագրում, որ Սուրբ Ավետարանի ոգուն եւ պատգամին հակառակ այդ բոլոր նախաձեռնությունները խրախուսում եւ ուղղորդում են Կորյուն արեղա Առաքյալն եւ մի քանի եկեղեցականներ։

Դժբախտաբար մինչ օրս հայր Կորյունը եւ իր կողմնակիցներն անտեսում են ինչպես մեր՝ միաբաններին, այնպես էլ եպիսկոպոսաց դասի, թեմակալ առաջնորդների, հոգեւոր հովիվների եւ մտահոգ հավատացյալների ջանքերն ու հորդորները։

Միաբանական ժողովը քննարկումների արդյունքում որոշեց նաեւ դիմել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Կորյուն արեղա Առաքյալի հակակառնական եւ հակաեկեղեցական ընթացքը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կարգապահական հանձնախմբում քննության առնելու համար»։

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՆԵՎԵՑ ԿԱԹՈՂԻԿԵ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏՈՒՆԸ



Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին հունիսի 3-ին մեծ հանդիսավորությամբ նշեց Կաթողիկե Սուրբ Էջմիածնի տոնը։ Բերկրառատ օրվա կապակցությամբ, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Մայր տաճարում մատուցվեց ս. Պատարագ։

Պատարագիցն էր Մայր Աթոռի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը։ Նաթան սրբազանը, անդրադառնալով տոնի խորհրդին եւ Հայաստան աշխարհում քիստոնեության տարածմանը, իր քարոզում մասնավորաբար ասաց. «Սիրելի՛ թուրքեր եւ եղբայրներ, այսօր մեծ տոն է հայ ժողովրդի համար, այսօր մեծ տոն է հայ հավատացյալի հոգու համար, քանզի մենք

ցնծությամբ տոնում ենք Մայր տաճարի՝ Ս. Էջմիածնի տոնը։ Այն ոչ միայն մի պարզ տաճարի, այլ մեր ազգի հոգու հավիտենական տաճարի տոնն է։ Առաջին իսկ դարերից Հիսուսի աշակերտներն իրենց ուղերձն ուղղեցին դեպի Հայաստան աշխարհ, եկան Տիրոջ հավատքը տարածելու, եկան՝ իրենց հետ բերելով ոչ միայն հավատքը, այլեւ Տիրոջ հետ կապված կարեւոր մատուցելու։ Այս վայրում՝ Էջմիածնի Ս. Կորնալի տեղում, մեր հավատքի հայր ս. Գրիգոր Լուսավորիչը տեսիլք ունեցավ. Հիսուս Իր համբարձումից հետո մեկ անգամ եւս իջավ երկիր, իջավ մեր հողի վրա եւ ցույց տվեց այն տեղը, ուր պետք է այս տաճարը կառուցվեր։ Այն կառուցվեց, հիմնաքարերը դրվեցին, թե՛ արքան եւ թե՛ Գրիգոր Լուսավորիչն ու ողջ ժողովուրդը ցնծության մեջ

էին։ Սա, սիրելիներ, մեզ համար պարզ պատմություն է, սա մեր հոգու եւ ինքնության պատմությունն է, սա մեր հայ լինելու հավիտենական պատմությունն է, որովհետեւ Ս. Էջմիածինը ոչ միայն քարեղեն տաճար է, այլեւ հոգեղեն հավիտենական տաճար, քանի որ Ս. Էջմիածինն ամեն հայի համար պարզ ուխտավայր է։ Հայը, գալով այստեղ, իր ուխտը նորոգում է Տիրոջ, իր ազգի եւ հայրենիքի հետ։

Ս. Էջմիածինը խորհուրդն է հայի անկոտրում ոգեկանության ու հավատքի։ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ ժողովրդի հոգեւոր կենտրոնն է, կոչում, սակայն այն միայն հոգեւոր կենտրոնն է։ այն պահապանն է հոգու, այն պահապանն է մեր ազգային ինքնության։ Սուրբ Էջմիածինն այն ամուր զնդանն է, որի վրա հազարամյակների ընթացքում մի-

լիոնավոր մուրճեր են մաշվել ու դեռեւս կմաշվեն։ Ու թող թուրք իմանան, որ դրանք այսօր կան, իսկ վաղը՝ ոչ։ Իսկ Էջմիածինը հայի հոգու նման հավիտենական է, Ս. Էջմիածինը մեր հոգու կենսաբեր աղբյուրն է»։

Այնուհետեւ սրբազան հայրը բոլոր ներկաների անունից որդիական խոսարկությամբ շնորհավորեց եւ ամենքի սերը հայտնեց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետին՝ ս. Գրիգոր Լուսավորչի իրավահաջորդին՝ մաղթելով կյանքի երկար ու արեւշատ տարիներ, քաջամոռ կեցություն, նաեւ ամենակալ Աստծուց հայեցեց, որ հայոց Հովհաննիսյանի աղոթքներով Մայր Աթոռը միա հայ ազգի ինքնության գրավակալն է եւ Նորին Սրբության առաջնորդությամբ մեր ժողովուրդն ազատ շնչի այս երկրի վրա՝ ազատագրված մեղքից, ազատագրված ամեն

տեսակի չարիքից։ Ապա Նաթան սրբազան իր սրտագին մաղթանքը բերեց հոգեւորականներին՝ հավելելով նաեւ, որ յուրաքանչյուր հոգեւոր սպասավոր Մայր Աթոռի անդրադարձն է հանդիսանում։

Հավարտ Պատարագի սրբազան արարողության, բարձր նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Սուրբ Էջմիածնի մաղթանք՝ ի շինություն Մայր Աթոռի եւ ի արդյունավորում Ամենայն Հայոց Հայրապետի երկարամյա հովվապետության։

Արարողությանը ներկա էին Մայր Աթոռի միբանությունը, թեմակալ առաջնորդներ եւ վանաբնակ եպիսկոպոսներ, Մայր Աթոռի բարերարներ եւ Մայր Աթոռում ուխտավորաբար գտնվող բազում բարեպաշտ հայորդիներ։

Մերբիայի Նովի Սաղ քաղաքում տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների խորհրդի հերթական գագաթնաժողովը

Մայիսի 31-ին Մերբիայի Նովի Սաղ քաղաքում սկսվեց Եվրոպայի Եկեղեցիների խորհրդի հերթական գագաթնաժողովը, որին մասնակցում էր տարբեր եկեղեցիների եւ հարանվանությունների շուրջ 500 ներկայացուցիչ։

Գագաթնաժողովը, որ կրում էր «Դուք իմ վկաները պիտի լինեք» ընդ-

դկոտոր Կարեն Նազարյան (հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական հիմնադրամի տնօրեն) եւ տիար դոկտոր Խաչիկ Բաֆֆի Գազեր (Գերմանիայի հայոց թեմ)։

Հունիսի 5-ին տեղի ունեցան գագաթնաժողովի եզրափակիչ նիստը եւ փակման հանդիսավոր արարողությունը։

կով գագաթնաժողովին մասնակցող Վիգեն արք. Ալբազյանի եւ Եթե Կառավարման խորհրդի անդամ Եզնիկ արք. Պետրոսյանի հանդիսապետությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի պատվիրակության անդամները կատարեցին Արեւագալի ժամերգություն։ Օրվա պատգամի՝ քրիստոնեական արդարու-



հանուր խորագիրը, անցկացվեց տպյն թվականի մայիսի 31-ից մինչեւ հունիսի 6-ը։

Եկեղեցիների Եվրոպական խորհրդի կառավարման խորհրդում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցուց պաշտոնապես ներկայացված էր Հայաստանի աստվածաշնչյան ընկերության գլխավոր քարտուղար Եզնիկ արք. Պետրոսյանը։

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին՝ իբրեւ Եվրոպայի Եկեղեցիների խորհրդի անդամ, գագաթնաժողովին մասնակցում էր պաշտոնական պատվիրակության հետեւյալ կազմով. Հովակիմ եպս Մանուկյան (առաջնորդ Մեծ Բրիտանիայի հայոց թեմի), Շահե ծ. վրդ. Անանյան (Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն), տիար

Նախորդ օրը Եթե-ի Կառավարման խորհրդի անդամների ընտրության արդյունքում Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պատվիրակությունից Կառավարման խորհրդի անդամ ընտրվեց Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանը։

Հովակիմ սրբազանը, նախքան թեմական-առաջնորդական ծառայության կոչվելը, շուրջ հինգ տարի (2010-2015 թթ.) ղեկավարել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական գրասենյակը։ Սրբազան հայրն ակտիվորեն ներգրավված է եղել նաեւ Եթե-ում՝ իբրեւ Կենտրոնական հանձնախմբի անդամ (2007-2013 թթ.)։

ԱՄՆ Եկեղեցիների ազգային խորհրդի դիտորդի կարգավիճա-

թյան մասին քարոզեց եւ ներկաներին իր խորհրդածությունները ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը։

Հաջորդ օրը՝ հունիսի 3-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական պատվիրակությունը նաեւ Հոգեհանգստյան կարգ կատարեց Նովի Սաղ քաղաքի կենտրոնում՝ Մեծ երկրաշարժի օրերին դեպի Հայաստան օգնության շտապող եւ ինքնաթիռի վթարի գոհ դարձած յոթ օդայինների հիշատակին կանգնեցված Հայկական խաչքարի առջեւ։ Հոգեհանգստյան արարողությանը ներկա էին նաեւ Եթե գագաթնաժողովի բազմաթիվ մասնակիցներ ու պատգամավորներ։

Մայր Աթոռում հյուրընկալվեց Լեհաստանի Հայաստան- Լեհաստան բարեկամության միջխորհրդարանական հանձնախումբը



Հունիսի 12-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանում հյուրընկալեց Լեհաստանի Հայաստան-Լեհաստան բարեկամության միջխորհրդարանական հանձնախմբի ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ հանձնախմբի ղեկավար Թադեոշ Վոգնյակի եւ ուղեկցությամբ Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Պավել Զեպլակի։

Հանդիպմանը Նաթան սրբազանն անդրադարձավ հայ-լեհական բազմադարյան կապերին՝ ընդգծելով, որ Լեհաստանում 650-ամյա ներկայությամբ հայերն իրենց նպաստն են բերել եւ այսօր էլ շարունակում են իրենց ակտիվ մասնակցությունն ունենալ երկրի մշակութային, քաղաքական եւ տնտեսական կյանքում։

Նաթան սրբազանը հիշատակեց տեղեկություններ փոխանցեց նաեւ Հայոց Եկեղեցու պատմության, Մայր Աթոռի՝ հայ ժողովրդի կյանքում ունեցած դերակատարության եւ ներկայիս գործունեության մասին։

Իր հերթին հանձնախմբի ղեկավար Թադեոշ Վոգնյակը տեղեկացրեց, որ այցի նպատակն է առավել խորացնել ու ընդլայնել հայ-լեհական մշակութային եւ տնտեսական կապերը։ Պրն Վոգնյակը կարեւորեց նաեւ երկու երկրների միջկրոնական կապերի զարգացումը։

Հանդիպման անդրադարձ եղավ նաեւ Հայաստանյայց Առաքելական ու Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիների միջեւ ձեւավորված հարաբերություններին։

Մայիսի 29-ից հունիսի 1-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Նախագահությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքից հետո ժողովի նիստերն ատենապետեց Մայր Աթոռի միաբան համակարգը: Պարսամյանը:

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողով

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

յացվեցին Եկեղեցական-Ներկայացուցչական ժողովի (ԵՆԺ) քննարկային հանձնախմբի եւ օրհնականության հանձնախմբի աշխատակարգերի նախագծերը: Այս առիթով զեկույցներով հանդես եկան հանձնախմբերի ատենապետեր Բագրատ Եպս Գալստամյան:

այցելություններ տարբեր սրբավայրեր: Երիտասարդական խմբերը նաեւ հանդիպումներ կունենան Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ հոգեւոր դասի ներկայացուցիչների հետ:

ԳՀԿ անդամները գոհունակությամբ ընդունեցին զեկույցը՝ ողջունելով ձեռնարկված միջոցառումները եւ մեծապես կարեւորելով երիտասարդության հետ Հայոց Եկեղեցու կողմից տարվող մշտական աշխատանքը:

Կանանց դպրական աստիճան շնորհելու վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը եւ ընթացակարգը ներկայացրեց Դիվանատան Եկեղեցական-ժողովական գրասենյակի տնօրեն Չաքարիա Ժ. Վրդ. Բաղդամյանը: Զննարկումից հետո որոշվեց շարունակել այս ուղղությամբ ուսումնասիրությունները եւ հարցը ներկայացնել Եպիսկոպոսաց ժողովի քննարկմանը:

Ժողովին Մայր տաճարի հիմնանորոգության եւ ամրակայման ընթացքի վերաբերյալ զեկույց ներկայացրեց Մայր Աթոռի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ Եպս Բաբայանը:

Լսվեց նաեւ Մարկոս Եպս Հովհաննիսյանի զեկույցը՝ Բուլղարիայի հայոց թեմի պատգամավորական ժողովում թեմական կանոնադրության քննարկման արդյունքների մասին: Որոշվեց հարցը քննարկել նաեւ թեմի թեմական խորհրդի ներկայացուցիչների հետ՝ վերջիններիս Մայր Աթոռ առաջիկա այցի ընթացքում:

Հայ Եկեղեցու հայեցակարգի պատրաստման ընթացքի վերաբերյալ զեկույցեց աշխատանքային հանձնախմբի ատենապետ Աբրահամ արք. Մկրտչյանը: Ժողովականները կարեւոր նկատեցին այս ուղղությամբ ձեռնարկվող քայլերը՝ թելադրելով ամբողջացնել աշխատանքներն ու հարցաշարը հայեցակարգի նյութերի շուրջ եւ հարցին վերստին անդրադառնալ ԳՀԿ հաջորդ ժողովին:

Գերագույն հոգեւոր խորհուրդն այս կապակցությամբ նաեւ իր գնահատանքը հայտնեց Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն Բագրատ Եպս Գալստամյանին՝ կատարված աշխատանքի համար:

Ժողովին անդրադարձ կատարվեց նաեւ Հայաստանում վերջին շրջանում տեղ գտած ներքաղաքական զարգացումներին: Իրավիճակի խաղաղ հանգուցալուծման ուղղված Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քայլերի մասին զեկույց ներկայացրեց Տեղեկատվական համակարգի տնօրեն Վահրամ քնն. Մելիքյանը: Զննարկումներից

հետո ժողովականները գոհունակությամբ հայտնեցին առկա մատված, որ հնարավոր եղավ ներհայաստանյան կյանքում խուսափել բախումներից ու անցանկալի երեւույթներից, հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում կարեւորվեց

Այնուհետեւ ներկաներին ողջունեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ուրախություն հայտնելով հանդիպման հնարավորության համար: ՀՀ վարչապետը, խոսելով Հայաստանում սիրո եւ համերաշխության կարգախոսի ներքո տեղի ունեցած փոփոխությունների մասին, կարեւորեց ամենքի ջանքերի մեկտեղումը, որպեսզի ձեռնարկված այդ մթնոլորտը լինի մշտական իրողություն Հայաստանի Հանրապետությունում եւ ընդհան-



Օրակարգի հաստատումից հետո ընթերցվեց եւ հաստատվեց նախորդ՝ 2018 թ. փետրվարի 20-23-ին գումարված ԳՀԿ ժողովի արձանագրությունը:

Ժողովի ընթացքում Գերագույն հոգեւոր խորհրդի ուշադրությանը հանձնվեց ԳՀԿ կանոնադրության

նը եւ Միքայել Եպս Աջապահյանը: Կատարված դիտարկումներից հետո որոշվեց ներկայացված առաջարկները փոխանցել ԵՆԺ կանոնադրական հանձնախմբին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հռչակված Երիտասարդության տարվա շրջանակներում հու-



լրամշակված նախագիծը: Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու կառավարման բարձրագույն մարմինների կանոնադրությունների մշակման հանձնախմբի անդամ Ի. Գ. Դ., պրոֆեսոր Գեորգ Դանիելյանը ներկայացրեց ԳՀԿ նախորդ ժողովին նախագծի առաջնությունը կատարված առաջարկների հիման վրա իրականացված փոփոխությունները: Գերագույն հոգեւոր խորհուրդը, հաստատելով խմբագրված փաստաթուղթը, հանձնարարեց այն ներկայացնել առաջիկա Ազգային-Եկեղեցական ժողովի վավերացմանը:

Խորհրդի քննարկմանը ներկա-

լիսի 4-8-ը ծրագրվող միջոցառումների մասին զեկույց ներկայացրեց Հայ Եկեղեցու Համաշխարհային Երիտասարդական միավորման հոգեւոր պատասխանատու Հովհան արք. Տերտերյանը: Տեղեկացվեց, որ այդ օրերին կկատարվի երիտասարդների օրհնության արարողություն, Ծաղկածորում տեղի կունենա քառօրյա հավաք, որի ընթացքում Հայաստանի եւ Սփյուռքի տարբեր թեմեր եւ համայնքներ ներկայացնող երիտասարդները կմասնակցեն թեմատիկ քննարկումների, հոգեւոր գրույցների, սեմինարների եւ խոսումների: Հավաքի ընթացքում ծրագրվում են



փոխադարձ հարգանքի, համերաշխության եւ միասնական ոգու դրսևորումը:

Նիստերի ընթացքում՝ հունիսի 1-ին, հրավերով Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայաստանի Հանրապետության

րապետ հայ ժողովրդի մեջ: Վարչապետն անդրադարձ կատարեց նաեւ Հայոց Եկեղեցու կարեւոր առաքելությանը եւ ազգային կյանքում անուրանալի դերակատարությանը, խոսեց Եկեղեցի-պետություն հարաբերությունների ու գործակցության մասին:



վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ հանդիպեց Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների, հայաստանյան թեմերի առաջնորդների եւ Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսների հետ:

Վեհափառ Հայրապետը ՀՀ վարչապետին ներկայացրեց Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին եւ ներկա հոգեւորականներին, տեղեկություններ փոխանցեց ԳՀԿ գործունեության եւ ժողովի օրակարգում ընդգրկվող ազգային-Եկեղեցական կյանքը հուզող զանազան խնդիրների մասին:

ԳՀԿ նիստերի ընթացքում քննության առնվեցին ներկայացված կյանքին առնչվող այլ խնդիրներ ու կարգապահական հարցեր:

Ժողովի օրերին, գլխավորությամբ Նորին Սրբություն Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, ԳՀԿ անդամներն այցելեցին Ծիծեռնակաբերդի եւ Սարգսյանի հոլաշահմալիքներ՝ աղոթելով նահատակ հայորդիների հոգիների հանգստության համար:

Զառոյա ժողովն ամփոփվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության եւ գնահատանքի խոսքով:



Հունիսի 2-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Ս. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կա-

տարվեց Սաղմոսավանի Նորակառույց հայորդյաց տան բացման արարողությունը:

Սաղմոսավանի հայորդյաց

Սաղմոսավանի նորակառույց հայորդյաց տան բացումը

տունը կառուցվել է բարերարությամբ տեր եւ տիկին՝ Լեւոն եւ Նադիա Զաքարյանների, ԵՀԿ հայաստանյան «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի ու Արի կանանց փոխադարձ օգնության միության օժանդակությամբ:

Արարողությանը ներկա էին Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ Եպս Պողոսյանը, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, Արագածոտնի թեմում սպասավորող հոգեւորականներ, Արագածոտնի մարգ-

պետ Աշոտ Սիմոնյանը, Սաղմոսավան համայնքի ղեկավար Գեորգ Ավագյանը, «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչներ եւ այս առիթով Հայաստան ժամանած Զաքարյան ընտանիքի անդամներ:

Արարողությունն սկսվեց օրհնության կարգով, ապա ամենքը «Քրիստոֆ Արմեն Զաքարյան» սրահում ներկա գտնվեցին այս առիթով կազմակերպված միջոցառմանը:

Բացման խոսքով հանդես ե-

կավ Սաղմոսավանի եւ Նոր Եդեսիայի հոգեւոր հովիվ Օշին քնն. Հայրապետյանը:

Այնուհետեւ խոսք ասաց բարերար Նադիա Զաքարյանը՝ անդրադառնալով իր որդու՝ Զրիստոֆ Զաքարյանի ինչպանակին կառուցված հայորդյաց տանը: Տիկին Զաքարյանը նաեւ շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ իրենց խնդրանքին ընդառաջելու եւ այս մտահղացմանը ցուցաբերած աջակցության համար:

Շարունակությունը՝ էջ 6

ՄԻ 1243 Թ. Բ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 9-10

2. «Ամեն քահանայագործություն՝ քահանայական արարողություն՝ կնունք, պսակ եւ թաղում, երկյուղածությամբ պետք է լինի, առանց զրույցի ու ծիծաղի, մերձավորների հույսով եւ աղոթքներով»:

Եկեղեցու սուրբ խորհուրդ կոչում ենք եկեղեցու վարդապետության այն արարողական մասը եւ աստվածապաշտական այն կատարյալ արարողությունը, որով իրապես յուրաքանչյուր ոք Նախ Զրիստոսի եւ Եկեղեցու իսկական եւ միակից անդամն է ճանաչվում, եւ ինքը խոստովանում, եւ երկրորդ՝ իրականապես թե՛ իբրեւ անհատ եւ թե՛ իբրեւ համայնքի մի անդամ մտնում է Զրիստոսի ամենամտերիմ եւ էական հաղորդակցության մեջ եւ այդ կենսական հաղորդակցության մեջ մտնում, ամրանում եւ շնորհներ վայելում (*տե՛ս Տեր-Միքելյան Ա., Նշվ. աշխ., էջ 379*): Այլ խոսքով՝ խորհուրդը բառի կրոնական եւ աստվածաբանական իմաստով Նշանակում է անտեսանելի բաների հայտնություն: «Խորհուրդ» բառի իմաստը հասկանալուց հետո հարկ ենք համարում նշել, որ այն ըմբռնում ենք հավատքով եւ երկյուղածությամբ, քանզի քրիստոնեական սուրբ կրոնը, ինչպես գիտենք, ինքնին հիմնված է հավատքի վրա: Հետեւաբար, առանց հավատքի ու առանց երկյուղածության անհնար է ընդունել խորհուրդը: Իսկ արդեն ծեսերը՝ քահանայական արարողությունները, սահմանված կարգով կատարվող արարողություններ են, որին հավատացյալները վերագրում են մոգական, խորհրդավոր հատկություններ: Այլ կերպ ասած՝ քահանայական արարողությունը



հանայական արարողությունը խորհուրդն է՝ կիրառության մեջ: Եվ քանի որ մենք խորհուրդը պետք է ըմբռնենք երկյուղածությամբ, դրանք պարտադիր կերպով պետք է կատարվեն նույն ձևով: Հասկանալի է, որ, օրինակ, պսակի կատարման ժամանակ բավական թվով մարդիկ են հավաքվում, եւ աղմուկն ու զրույցը անխուսափելի են: Բնականաբար կանոնի այս հատվածը վերաբերում է պսակի արարողությանը: Նաեւ կանոնը սահմանում է, որ նշյալ արարողակարգերը պետք է ուղեկցվեն մերձավորների հույսով ու աղոթքով: Օրինակ՝ կնունքը, թաղումը միանշանակ պետք է ուղեկցվեն հարազատների աղոթքով, քանի որ շատ կարելի է նրանց աղոթքը, որ իրենց հարազատները ստանան սրբերի բարեխոսությունը: Շատ կարելի է նաեւ մահացած մարդկանց հոգիների խաղաղության համար աղոթելը, որովհետեւ նաեւ այդ աղոթքների շնորհիվ

է, որ մարդիկ պետք է արժանանան երկնային արքայության:

Ե. «Ավագանը հաստատուն ու անշարժ պետք է լինի եւ վարագույրով ծածկված, որովհետեւ նրա խորհուրդը մեծ է»:

Շարժական ավագաններն արգելվում են՝ Նախընթաց կանոնների համաձայն, նաեւ կնունքն ու պսակը իրամայված էր եկեղեցում անել: Նախ ուզում ենք նշել, որ ավագանը մկրտությանը ծառայող եւ խորացրած տաշածեւ քար է, որի մեջ ջուր են լցնում եւ մկրտվողին դրա մեջ մտցնում՝ մկրտության խորհուրդը կատարելու համար: Ավագանները եկեղեցու մեջ հաստատված պիտի լինեն՝ ամրացված աջակողմյան պահարանի հյուսիսային պատի առջեւում՝ մինչեւ մարդու մեջքին հասնող բարձրությամբ եւ ապահովության համար հատուկ թաքստոցի նման փակ դիմացի մեջ առնված: Ավագանի հաստատուն լինելը, մկրտությունները եկեղեցում կատարելը, հարկավ, եկե-

ղեցական օրենք են: Սակայն կարող ենք հանդիպել այնպիսի դեպքերի, երբ երեխայի գտնված տեղում եկեղեցի չլինի, կամ թե անհրաժեշտ պատճառով եկեղեցի գնալն անհնարին լինի: Այդպիսի առիթների դեպքում թերեւս թույլատրելի է շարժական ավագանի կիրառությունը: Կան տեղեր, ուր հատուկ օժանդակ շարժական ավագան կա քարից, թիթեղից կամ ամուր փայտից: Այս տեղի է ունենում, երբ չափահաս անձի մկրտության առիթ է պատահում, եւ եկեղեցու ավագանն անբավարար է դառնում նրա մարմնի համար: Կոստանդին Ա Բարձրաբերդցու շրջաբերականով հանձնարարվում է մկրտության ավագանը ծածկել վարագույրով:

Ինչպես պարզ է դառնում կանոնի բովանդակությունից, շարժական ավագանների կիրառումը չէր վերաբերում վերոնշյալ դեպքերին: Այսինքն՝ շարժական ավագանները կիրառվել են նաեւ սովորական դեպքերում: Եվ զերծ մնալ շարժական ավագաններից, եկեղեցական խորհուրդները՝ կնունքն ու պսակը, կատարել եկեղեցում: Բնականաբար այս հատվածի առկայությունը չի վերաբերում հատուկ դեպքերին, օրինակ, ինչպես արդեն նշել ենք, կա երեխայի մահվան վտանգ, խորհրդի կատարման վայրն այդ պարագայում չի կարելի մտնել: Դրանից պարզ է դառնում, որ այդ խորհուրդները չեն կատարվել եկեղեցում, որը հակասում է եկեղեցական օրենքին: Հոգեւորականները քահանայան արարողությունները կատարել են որտեղ պատահի եւ այսպիսով՝ խոտել եկեղեցական սրբազան կանոնադրությունը:

Ը. «Պսակը ընտրությամբ պետք է անեն, արյան ազգակցությունից վեց պորտով հեռացած պետք է լինի. փեսացուն տասնչորս տարեկանից ոչ պակաս, իսկ հարսը՝ տասներկուսից»:

Տարիքները հետին կանոններով են այժմյան սովորությամբ շատ նվազ են, որովհետեւ այդ տարիքները կատարյալ խելահասություն չեն ենթադրում: Իսկ հասունության ճյուղերը մինչեւ վեց են բարձրացված՝ միշտ երկու կողմերի ծնունդները գումարելով: Յոթերորդ զարմի արգելք հիշված չէ: Իսկ խնամության ճյուղերի վերաբերյալ բնավ խոսք չկա, եւ միայն ու միայն արյան ազգակցությունն է հիշվում: Շահապիվանի ժողովի մեջ մենք տեսնում ենք չորս ճյուղերի արգելքը (*Օրմանյան Մ, Ազգապատում Ա, ս. 170*):

Շարունակությունը՝ էջ 7

Սկիզբը՝ էջ 5

Ողջույնի խոսք ասացին նաեւ «Կլոր սեղան» միջեկեղեցական բարեգործական հիմնադրամի ներկայացուցիչ Կարինե Բաղդասարյանը եւ Սաղմոսավան համայնքի ղեկավար Գեորգ Ավագյանը:

Ապա ազգագրական երգերի ու պարերի կատարումներով հան-

ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅԵ ԽԱՅՈՐՈՂՅԱԿ ԵՎ ՔԱՅՈՒՆԸ

կաներին ողջունեց Արագածոտնի թեմի առաջնորդ Սկրտիչ Եպիսկոպոսը: Սրբազան հայրն իր երախտագիտությունը հայտնեց

չակցության համար: Սրբազանն այդ կապակցությամբ նաեւ իր շնորհակալությունը հայտնեց մարգային իշխանություններին՝ ի դեմս մարզպետ Աշոտ Սիմոնյանի, եւ շինարար Գագիկ Կարապետյանին:

Նրա պատգամներն ու պատվիրանները եւ կրթական հաստատության հարկի ներքո զարգացնեն ու զորացնեն իրենց տաղանդները՝ դառնալով արժանավոր զավակներն ազգի, հայրենիքի եւ մեր սուրբ Եկե-

յորոյաց տան բացման կապակցությամբ իր բարձր գնահատանքը փոխանցեց բարերարներին, «Կլոր սեղան» հիմնադրամին եւ բոլոր նրանց, ովքեր իրենց նպաստն են բերել կրթօջախի կառուցման գործում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն առ Աստված աղոթքով հայցեց, որ Տերն իր հանապազ օրհնության ներքո խաղաղ պահի մեր հայրենիքն ու աշխարհասփյուռ ժողովրդին:



ղես եկան Աշտարակի «Գուլամերյան» հայորդյաց տան, Աշտարակի «Սուրբ Մարիանե» սոցիալական կենտրոնի, Սաղմոսավանի «Տաթեւ» համույթի սաները: Հանդիսության ավարտին ներ-

վեհափառ Հայրապետին, ինչպես նաեւ «Կլոր սեղան» հիմնադրամին ու Զաքարյան ընտանիքին՝ Սաղմոսավանի հայորդյաց տան կառուցմանը բերած իրենց անգնահատելի ա-



Միջոցառումն ամփոփվեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Նորին Սրբությունն ի մասնավորի նշեց, որ երեխաներին է ընծայաբերվում մի տղային՝ հայորդյաց տուն, որտեղ Սաղմոսավանի մանուկներն ու պատանիները պետք է ճանաչեն Աստծուն, ընդունեն

ղեցու: Նորին Սրբությունը գոհունակությամբ ընդգծեց, որ Սաղմոսավանի հայորդյաց տունը երեւանում եւ Հայաստանի տարբեր քաղաքներում ու համայնքներում Հայ Եկեղեցու հովանու ներքո գործող 10-րդ նույնաբնույթ կրթական հաստատությունն է: Վեհափառ Հայրապետը հա-

վերջում Գարեգին Բ Հայրապետը՝ ուղեկցությամբ Սկրտիչ սրբազանի եւ բարերարների, շրջեց նորակառույց հայորդյաց տանը եւ ծանոթացավ մանուկների համար ստեղծված պայմաններին:

Լրատվական կյութերը՝ ՄԱՅՐ ԱՌՈՒ ՍՈՒՐԵ ԷԶՄԱՍՏԻ ՏԵՐԵԿԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

Սկզբը՝ թիվ 4-9

Աբովյանի երգիծանքը. «Հագարփոշեն» երգիծապոեմը: Առակները դիտարկելիս տեսանք, որ Խ. Աբովյանը դրսեւորել է կենսական արատավոր երեւոյթները քննադատելու, ծաղրելով ու երգիծելով պատկերելու բուն հակում: Այդպիսի հակում շատերն են ունեցել, գրեթէ բոլոր գրողների երկերում կարող ենք տեսնել երգիծական էջեր, անգամ առանձին երգիծական ստեղծագործութիւններ, ինչպէս դրանք առկա են Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Սուրուկյանի, Ա. Արփիարյանի, Առանձարի, Յ. Թումանյանի, Գր. Չոխրապի, Ե. Զարեհի, Ա. Բակունցի, Գ. Մահարու, Յր. Մաթեոսյանի ստեղծագործութիւններում: Սակայն հազվագյուտ են կոչումով երգիծաբան ծնված գրողները՝ Հ. Պարոնյանը, Եր. Օտյանը, Լեւ Կամսարը եւ սրանց նմանները նաեւ համաշխարհային գրականութեան մեջ՝ Սերվանտես, Ջ. Սվիֆտ, Ն. Գոգոլ, Ստ. Ընդերին եւ այլք, ովքեր ունեցել են կյանքի չեղեացող կողմերը, մարդկային բնավորութեան դատապարտելի գծերը տեսնելու եւ պատկերելու, «անտեսանելի արցունքների միջից ծիծաղելու» առանձնահատուկ կարողութիւն եւ գեղարվեստական մեծ արժեքներ են ստեղծել հատկապէս երգիծանքի ասպարեզում: Աբովյան գրողը եւս բացառութիւն է: Բազմաթիվ ժանրային նորութիւնների հետ միասին՝ բայաթի, չափածո առակ, վեպ, ուղեգրութիւն, կարճ, զվարճալի պատմութիւն, պատմվածք եւ այլն, նա հայ գրականութեան երբեք մարդկանց ու աշխարհին «հակառակ կողմից» նայելու կերպը: Չորեք է նրա հումորի զգացումը, նրա գեղարվեստական մտածողութիւնից անբաժան է երգիծաբանի բնական ձիրքը, որը դրսեւորվել է ոչ միայն հատուկ երգիծելու նպատակով գրված գործերում՝ առակներում, բնաստեղծութիւններում, կարճ զվարճալի պատմութիւններում, այլեւ նույնիսկ «Վերջ Հայաստանի» վեպի էջերում: Հիշենք թեկուզ վեպի առաջին գլխում տառապանքի անսանագոմում կազմակերպված քեդիսուդաների խնջույքի տեսարանը, տանտիրոջ ու տանտիրուհու՝ կվանոց ընկնելու, մի երկու դուռում «անուշ անելու» վերջինիս աղտոտված արտահագուստը զգիր Կոտանի կողմից բազկաթանով լվանալու դրվագը եւ այլն:

«Հախվերմագի գովքը» ստեղծագործութեան մեջ նա խստորեն ծաղրել է անբարեխիղճ մի մարդու եւ նրանով՝ մարդկային այն տեսակին, որ ուրանում է իր պարտքը: Այդ տեսակ մարդկանց է նա անվանում թուրքերեն «հախվերմագ», այսինքն՝ պարտքը ուրացող, վարձահատույց լինելուց հրաժարվող: Ստեղծագործութեան «հերոսը» Աբովյանի «գովքին» է արժանացել այն պատճառով, որ զլացել է վարձահատույց լինել իր զավակին կրթող դաստիարակողին:

Խ. Աբովյանի երգիծանքը, սակայն, լավագույն դրսեւորում է ստացել «Հագարփոշեն» երգիծապոեմում: Հագարփոշեա կոչվում էր արծաթյա կոթավոր գավաթը, որով կովկասահայերը, կարասից հանելով, գինի էին մատուցում հյուրերին՝ հա-

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ (1809-1848)



շորդաբար փոխանցելով: Պոեմի արձակ փոքրիկ առաջաբանում Խ. Աբովյանն անթաքույց արտահայտում է իր համակրանքներն ու հակակրանքները: Առանձնակի զայրույթով է Աբովյանն արտահայտվում այն մարդկանց մասին, ովքեր խեղճ ժողովրդի վրա են ձեռք բարձրացնում, ծաղրում ու արհամարհում նրան: Մինչդեռ, ըստ Աբովյանի, խելամիտ մարդը նա է, ով ժողովրդի պակասութիւնները, թերութիւնները տեսնելիս ոչ թէ ծաղրում, այլ բարեկամաբար օգնում է դրանք վերացնելուն: Իսկ ցարական պաշտոնյաները թե՛ օգտվում էին «օրենք չիմացող» կովկասցիների հյուրասիրութիւնից, թե՛ արհամարհանքով էին վերաբերվում իշուրընկալներին՝ իրենց պատվասիրելը համարելով նրանց պարտականութիւնը:

Կովկասցի մարդն զակոնն ի՞նչ գիտի. Չարկ գլխին, դրաղին կանքնած քե՛ֆ արա:

Սակայն հեղինակը համոզված է, որ կովկասյան տեղաբնիկները՝ հայն ու վրացին, մի օր խելքի կզան, կհամախմբվեն եւ թույլ չեն տա, որ «ամեն հայվարա մարդ իրենց վրա բերան բացի»: Ներկայացվում է մի փոքրիկ դէպք, անշան թվացող, սակայն հարուստ մի գործողութիւն, որի մեջ ցուցադրվում է ռուս պաշտոնյայի բնավորութիւնը: «Սատանի քամին» ինչ-որ հրաշքով Կովկաս լեռներից այս կողմ է շարժում ռուս պաշտոնյային: Նոր միջավայրում՝ քեֆի սեղանի շուրջ, նա իրեն պահում է լպիրշ ու սանձարձակ: Մարդիկ անկեղծ սրտով հյուրասիրում են նրան՝ հագարփոշեալով գինի հյուրասիրելով, սակայն աստիճանաբար գինուն պարտվող եւ ինքնա-

տիրապետումը կորցնող պաշտոնյան սկսում է կարծել, թէ մարդիկ պարտավոր են, եւ այդ անկեղծ ու սրտաբաց հյուրասիրութիւնն էլ կազմակերպված է ինչ-որ շահի կամ օգուտի համար: Իր կյանքը մինչ այդ ուրիշ միջավայրում անցկացրած, բալ ու տանցի, կոնցերտ ու տեսար, դամա ու կավալեր, մուզիկա ու սկրիպկա, քլուբ ու տրակտիր տեսած, բուտիլկա ու ռումկա ճաշակած մարդը նոր միջավայրում շփվում է ուրիշ ըմբռնումների ու առարկաների: Կովկասում արդեն նրան շրջապատել են հագարփոշեա ու կարաս, տկճոր (տիկ) ու ռումբի (տավարի կաշուց պատրաստված մեծ տիկ), խորոված ու քաբաբ: Զեֆի ժամանակ սկսվում է մի քաշքշուկ ու հրմշտոց, հարբած չինովկին ընկնում է խորովածի կրակի վրա, այլաճակում իր հագուստներն ու այրվածքներ ստանում: Նրան ուշքի են բերում «մեր հայի մուշտին ու վրացու քացին»: Հետո նա ձեռքն է առնում «սուրբ հագարփոշեն» եւ օրինում նրա գորութիւնը:

Աբովյանի այս պոեմն Եականորեն տարբերվում է կլասիցիստական անկյանք պոեմներից: Վերջիններիս վերացականութեան, չոր դատողականութեան փոխարեն այն աչքի է ընկնում աշխույժ գործողութեամբ, իրական կյանքի կենդանի ու գունագեղ պատկերներով:

ԱԲՈՎՅԱՆԸ ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ. ՆՐԱ ԲԵՐԱԾ ԳՐԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գրականութեան զարգացման ընթացքը պայմանավորված է հասարակական կյանքի մեծ տեղաշարժերով ու հանրային գիտակցութեան մեջ բեկումնային փոփոխութիւններով: Դրանցով են հատկանշվում նաեւ գրականութեան զարգացման շրջափուլերը, եւ ամեն նոր պատմաշրջան, հասարակական գիտակցութեան առաջընթացի հետ կապված, գեղարվեստական նոր մտածողութեան անհրաժեշտութիւն է ծնում: Այդ անհրաժեշտութիւնը գիտակցում ու գեղարվեստական մտածողութեան մեջ հեղաշրջում են իրականացնում նախ հզոր անհատականութիւնները, որոնց էլ սովորաբար անվանում են այս կամ այն շրջափուլի հիմնադիրներ: Միջնադարի ավարտից հետո հայ իրականութեան մեջ Խ. Աբովյանն առաջինն էր, որ նկատեց գրականութեան եւ հասարակութեան խզումը եւ խիզախեց գեղարվեստական նոր մտածողութեամբ

գրականութիւնը ծառայեցնել հասարակական առաջընթացին: Հին մտածողութիւն, ինչ ըմբռնումներ ու կարծրատիպեր, նախապաշարումներ, ինչ լեզու եւ գրականութիւն, որ իր գաղափարներով ու գեղագիտութեամբ գերազանցապէս ծառայում էր հոգեւոր ոլորտին՝ շրջանցելով ազգային ու հասարակական կյանքի հիմնախնդիրները, ժողովրդին պահելով միջնադարականութեան խավարի մեջ: Գեղարվեստական գրականութիւնը փաստորեն գրկված էր կենդանի իրականութիւնից, հանրութեան հոգեմտավոր զարգացումն առաջնորդող դերից: Այս իրավիճակի դէմ ըմբոստացավ Խ. Աբովյան գրողը, որն իր ստեղծագործութիւններով, նրանցից մի քանիսի համար գրած մեծ ու փոքր առաջաբաններով պարզաբանել է իր գրական հայացքներն ու մանավանդ հստակորեն ընդգծել գրականութեան հասարակական դերի իր ըմբռնումը: Այդ հայացքները՝ որպէս գեղարվեստական եւ գիտատեսական ամողջական համակարգ, հստակորեն շարադրված են «Վերջ Հայաստանի» վեպի «Հառաջաբանում», որը Խ. Աբովյանն ավելացրել է երկրորդ տարբերակում եւ ճշգրտումներով ամրակայել վերջնական բնագրում:

Հայ նոր գրականութեան հիմնադրի հարցը ժամանակներ ի վեր գայթակղութեան քար է եղել գրականութեան պատմաբանների եւ տեսաբանների համար: Տարակարծութիւնները ծագել են նոր գրականութեան զարգացման շրջափուլերի, բովանդակութեան նորացման, մարդկային ու հասարակական ծարաբերութիւնների պատկերման, կերպավորման արվեստի ու գեղագիտական ընկալումների փոփոխութեան, լեզվի, աշխարհայացքի տարբեր ըմբռնումներից:

Գրականութեան նորոգութիւնն իսկապէս սկսվել էր ավելի վաղ՝ 17-18-րդ դարերում, սակայն այդ ժամանակներում միջնադարականութիւնն անմիջապէս չվերացավ, ու տեղը միանգամից չհաստատվեց նոր գրականութիւնը, ինչպէս այժմ հրամցնում են ակադ. Ս. Սարիխանս ու նրա համախոհները: Նորոգութիւնը դեռեւս նոր գրականութիւն չէր: Ուշ միջնադարում գեղարվեստական մտածողութիւնը բարեփոխող գործիչներ, իհարկէ, եղել են եւ այն էլ՝ ո՛չ մեկը կամ մի քանիսը, բայց նրանց գործունեութիւնը չի հանգեցրել Եական ու վճռական այնպիսի փոփոխութիւնների եւ արդիւնքների, որոնցով հստակորեն սահմանազատվելիս, տեսանելի դառնալիս ինչ վերջն ու նորի սկիզբը: Սայաթ-Նովային միջնադարից նոր գրականութիւն տեղափոխելով ու նրան նորի չափանիշներով գնահատելով՝ հարցը չի լուծվում, որովհետեւ նրա ստեղծագործութեան մեջ է ամփոփվում հայ միջնադարն իր բոլոր հիմնական մտիւկներով ու աշխարհայայացողութեամբ: Եվ եթէ Սայաթ-Նովայով իսկապէս ավարտվում է միջնադարը, ապա նրա նախորդները, ժամանակակիցներն ու անմիջական հաջորդները՝ մինչեւ Աբովյան, նոր սկիզբ ազդարարող ուժեր չէին:

*Շարունակելի
Սամվէ ՄՈՐԱՎՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

Սկզբը՝ էջ 6

Նույն արգելքը մինչեւ չորս զարմ կրկնվում է նաեւ Պարտավի 786 թ. Բ ժողովի ԺԶ Կանոնով (*տե՛ս Կանոնագիրք Հայոց, հ. Բ, աշխատասիրութեամբ Վ. Հակոբյանի, Եր., 1971, էջ 309*): Մխիթար Գոշը 212-րդ կանոնով սահմանում է արյան ազգակցութեան արգելք մինչեւ իննգ զարմ (*տե՛ս Մխիթար Գոշ, Գիրք Ղատաւտանի, աշխ.՝ Խ. Թորոսյանի, Եր., 1971, էջ 376*): Անդրադառնալով ամուսնութեան տարիքային խնդրին՝ ուզում ենք նշել, որ ներկայիս մանկավարժական գիտութիւնը մեզ ներկայացնում է, որ այդ տարիքում (12 եւ 14 տարեկան) երեխաները դեռեւս սեռահասուն չեն: Բացառութիւն է կազմում միայն արքայերացիայի երեւոյթը, որը երեխաների ֆիզիկական ու սեռական վաղ զարգացումն է: Սա իր հերթին բերում է լուրջ խնդիրների: Վաղ զարգացած դեռահասներն իրենց բնախոսական զարգացմամբ համարյա հավասարվում են հասուն մարդու զարգացման մակարդակին, ինչը չենք կարող ասել նրա բարոյական, սոցիալա-

ՄԱՒ 1243 Թ. Բ ԺՈՂՈՎՆ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

կան հասունութեան մասին: Մեր թեմայից չչեղվելու համար նշենք, որ ներկայումս մանկավարժներն ու հոգեբանները ե՛ւ աղջիկների, ե՛ւ տղաների համար ամուսնութեան լավագույն տարիքը սահմանում են 26-28 տարեկանը, երբ նա ձեռք է բերում մասնագիտութիւն: Այդ տարիքում նա կարող է կանգնել հաստատուն ոտքերի վրա, ամուսնանալ, ընտանիք կազմել եւ դրա համար պատասխանատվութիւն ստանձնել (*Լ. Ասատրյան, Գ. Հակոբյան, Մ. Ասատրյան, Մ. Գեւորգյան, Ն. Կարապետյան, Ա. Բաղդասարյան, Մանկավարժութիւն, Եր., 2017 թ., էջ 93, 99*): Կարծում ենք, որ հարկ է հասկանալ կանոնի հիմքը, այն, թէ ինչու այսպիսի կանոն է ընդունվել այս ժողովում: Ինչպէս նշել ենք բազմիցս, ժողովի որոշումները տվյալ

ժամանակաշրջանի արտացոլումն են: Նաեւ գիտենք, որ այս ժամանակաշրջանում երկիրը գտնվում էր պատերազմի մեջ: Եվ հենց դրանով պայմանավորված՝ բարձր էր մահացութեան ցուցանիշը: Կարծելիութիւնը կարգավորող, վաղ տարիքում ամուսնութիւնը խրախուսող օրենքի խնդիր: Եվ այդ պատճառով է, որ այս կանոնը սահմանեց այդքան վաղ տարիքում ամուսնութիւնը: Իրենց կարծիքով՝ նրանք լուծում էին ծնելիութեան եւ ազգատոհմի շարունակման խնդիր, բայց, ինչպէս նշեցինք վերելում, այդքան վաղ տարիքում ամուսնութիւնը հետագայում կարող էր հանգեցնել շատ ու շատ բարդ խնդիրների: Բայց չպետք է մոռանալ, որ այդ ժամանակաշրջանում սերնդափոխութիւնը գերակա խնդիր էր: Համեմատութեամբ

կարգով նշենք, որ Ներսէս Շնորհալիս (1166-1173) իր «Թուղթ ընդհանրականում» սահմանում է 15 եւ 12 (*տե՛ս Ներսէս Շնորհալի, «Թուղթ ընդհանրական», Գանձասար հանդես, 1991, էջ 95*): Նույնը կրկնվում է նաեւ Ջազավանի 1270 թ. Ժողովում, թեւ հարմար է գտնում հարսնացուի 14 տարեկան հասակը (*տե՛ս Ջազավանի ժողովը եւ իր կանոնքը, առաջաբանը եւ թարգմանութիւնը՝ Ս. Մխիթարյանի, Հայ աստվածաբան, Ե, 2013, էջ 106*): Այստեղից կարող ենք եզրակացնել, որ Սսի Բ ժողովին հաջորդող տարիները ցույց տվեցին փեսացուի 15 տարեկան լինելու հանգամանքի ավելի նպատակահարմարութիւնը:

*Շարունակելի
Գոռ ԳՆԱՍՅԱՆ*

Սկիզբը՝ թիվ 9-10

Բայրոնը հայերենից անգլերեն է թարգմանել նաեւ երկու գլուխ հորենացու «Հայոց պատմություն»-ից եւ մի հատված Լամբրոնացու «Ճարտասանություն»-ից: Անահիտ Բեքարյանի «Օտարագի հեղինակները Բայրոնի եւ Միքայելայանների առնչությունների մասին» հոդվածից («Պատմաբանասիրական հանդես», 2007, 1) իմանում ենք, որ հետագայում գտնվել է հայերենից արված եւս մեկ թարգմանություն՝ աշխարհագրագետ, պատմաբան, բանասեր Ղուկաս Ինճիճյանի «Ամարա-նոց Բիզանդեան ի նեղուցին Կոստանդուպոլսոյ կոչեցեալ ի տաճկաց Պօղազ Ի-չի» վերնագրված պոեմից՝ 4-5 էջ:

Երիտասարդ բանաստեղծը մեծապես հետաքրքրվել է հայ պոեզիայով: Վերն արդեն նշել ենք, որ նա փափագել է հայերեն սովորել, որպեսզի բնագրով ծանոթանա հայ բանաստեղծական արվեստի ընտիր նշխարներին: Բայց քանի որ չի կարողացել լրիվ հասկանալ մեր բանաստեղծական երկերը, ուստի խնդրել է Ավգերյանին հայ բանաստեղծության ընտիր նմուշները հայերենից իտալերեն թարգմանել, որպեսզի կարողանա կարդալ դրանք: Հայր Զարությունը հին եւ նոր բանաստեղծական երկերից թարգմանել է որոշ կտորներ, որոնցից անգլիացի քերթողի դուրը եկել է Հռիփսիմի մասին Շնորհալու գրած հանճարեղ երգը:

Բայրոնը Հայոց կղզում, որը նա անվանել է «Հայկական անկախության շտաբ», գտնում էր հոգու անդորր, ստանում առատ հոգեւոր սնունդ, հաղորդակցվում հայոց հոգեւոր արժեքներին:

Հայերենի դասերը, գեղատեսիլ եւ ասպնջական կղզին, ձիթենիայացի հրաշալի պարտեզն ու մագաղաթյա ձեռագրերով հարուստ մատենադարանը հափշտակում են երիտասարդ պոետին: Կենսագիրը նշում է, որ Բայրոնն այդ օրերին իր ժամանակն անցկացնում էր Սուրբ Ղազարում՝ հայոց մեջ, եւ երբ վենետիկցիները որոնում էին նրան, անմիջապես դիմում էին այնտեղ:

1817 թ. հունվարի 2-ով թվագրված նամակում Բայրոնը Ջոն Մըրրեին գրում է. «... Կարող եմ քեզ վստահեցնել, որ հայերն այստեղ ունեն մի շարք շատ հետաքրքիր գրքեր եւ ձեռագրեր, գլխավորապես թարգմանություններ հունական բնագրերից, որ այժմ կորած են: Բացի այդ, նրանք այստեղ ներկայացնում են մի չափազանց հարգելի եւ ուսումնասիրելի հասարակություն, եւ Բոնապարտի օրով Ֆրանսիայի գանազան գիտնականներ մեծ եռանդով ձեռնարկել են նրանց լեզվի ուսումնասիրությունը»: Առհասարակ Բայրոնի նամակներում հաճախ են հանդիպում այսօրինակ տողեր՝ «Եվսեբիոսի բնագրի վաղուց կորած եւ վերջերս գտնված կտորների» հայերենից կատարված թարգմանություն» եւ այլն:

Գուստավ Ադոլֆ Շրոմպֆն ու Գարեգին Չարբանյանը հավաստում են, որ Անգլիայում, Վիստոնյան եղբայրներից հետո, Բայրոնը առաջինն էր, ով զբաղվել է հայոց լեզվի ուսումնասիրությամբ:

Անգլիացի հանճարն իր հեղինակավոր եւ եռանդոտ քարոզով մեծ զարկ է տվել հայագիտության տարածմանն ու զարգացմանը:

Միքայել Նալբանդյանն իր «Հայոց լեզվի ուսումնասիրությունը Եվրոպայում եւ հայ գրականության գիտական նշանակությունը» ռուսերեն աշխատության մեջ, խոսելով 19-րդ դարի՝ հանդերձյալ աշխարհին պատկանող առանձնապես նշանավոր հայագետների մասին, առաջինը նշում է բանաստեղծ լորդ Բայրոնի անունը՝ նրան համարելով հայ-անգլերեն քերականության հեղինակը:

Մինչ Բայրոնը հանդես եկած եվրոպացի գիտնականները հայոց լեզվի ուսումնասիրությամբ զբաղվել են առավելապես կրոնական նպատակներով: Նրանք նախեւառաջ կամեցել են Աստվածաշնչի հայերեն նշանավոր թարգմանությունն օգտագործել Սուրբ Գրքի բնագիրը ստուգելու համար: «Բայրոնը նույնպես զբաղվել է այդ հարցով՝ թարգմանելով առաքելական թղթերից երկու հատ,- գրում է

Դաշտենցը,- սակայն նա ամենեւին նպատակ չի ունեցել հայերենը սովորել կրոնական տեքստեր ստուգաբանելու համար: Բայրոնը, հայ լեզվի ուսումնասիրությամբ զբաղվելով, նպատակ է ունեցել Եվրոպայում ժողովրդականացնել հայ լեզուն եւ գրականությունը՝ իբրեւ հին քաղաքակիրթ մի ազգի լեզու եւ գրականություն, եւ իր քաղաքական տրամադրություններով հակվել դեպի հայ ժողովրդի ազատագրությունը»: Բայրոնի օրինակը խրախուսիչ է եղել շատ եվրոպացիների համար:

Հայ ժողովրդի եւ հայ մշակույթի նկատմամբ Բայրոնի ունեցած վերաբերմունքն արտահայտված է նաեւ նրա՝ վերն արդեն հիշված «Առաջաբան»-ում: Ներկայացնում ենք «Առաջաբան»-ի առավել ուշագրավ մասը. «... Այդ ժամանակ ես էլ, մյուս ուղեւորների նման, խիստ հետաքրքվում էի Ս. Ղազարի մենաստանի հասարակությամբ, որը կղերական հաստատության մեջ միավորում էր բոլոր առավելությունները՝ առանց յուրացնելու դրա մոլություններից որեւէ մեկը: Կացարանի մաքրությունը, հանգստավետությունը, աբեղաների ազնվությունը, բարեկրթությունը եւ եղբայրական առաքինությունները անտարակույս պետք է համոզեն աշխարհիկ մարդուն, թե «կա մի ուրիշ եւ ավելի լավ բան»՝ նույնիսկ այս կյանքի մեջ:

Այս մարդիկ քահանաներ են մի հարստահարված եւ ազնվական ազգի, որը հրեաների ու հույների նման տարագիր եւ ստրուկ է եղել՝ առանց առաջինների պես խստասիրտ կամ վերջինների պես գերի դառնալու: Այս ժողովուրդը հարստացել է առանց վաշխառության եւ վաստակել է ամեն պատիվ, որ կարող են գերության մեջ վաստակել առանց խարդախության: Բայց նրանք, այնուամենայնիվ, երկար ժամանակ գրավեցին իրենց բաժինը «Գերության Տան» մեջ, որ վերջերս բազմապատկել էր իր անթիվ օթեւանները:

Գուցե դժվար կլինեւ որեւէ այլ ազգի տարեգրությունները գտնել ավելի նվազ արատավորված ոճիկներով, քան հայոց, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թերությունները՝ ճնշման հետեւանք: Սակայն ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը,- իսկ դա անցյալում դառն է եղել,- ինչպիսին էլ լինի նա ապագայի մեջ, նրանց երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը, եւ թերեւս միայն նրանց լեզուն կարիք ունի ավելի շատ ուսումնասիրվելու, ավելի գրավիչ դառնալու համար: Եթե Ս. Գիրքն ուղիղ ըմբռնենք, Հայաստանի մեջ էր, որ գետեղված էր դրախտը, Հայաստան, որ Ադամի սերունդների չափ նույնքան թանկ վճարեց իր հոգու վաղանցուկ մասնակցության համար այն մարդու երջանկությանը, որն իր փոշուց էր ստեղծված: Հայաստանի մեջ նախ ջրհեղեղը տեղաց, եւ ապա աղավաղեց հանգավ: Բայց կարելի է ասել, թե դրախտի անհետացման հետ սկսվեց նաեւ այս երկրի տարաբախտությունը, որովհետեւ թեպետեւ երկար ժամանակ նա եղավ մի գորավոր թագավորություն, բայց հազիվ երբեք անկախ մնաց. եւ պարսից սատրապները, եւ թուրքական փաշաները հավասարապես անապատ դարձրին այն երկիրը, ուր Աստված ստեղծել էր մարդուն՝ ըստ իր հատուկ պատկերի»:

«Առաջաբան»-ի մասին Դաշտենցը գրել է. «... լորդ Բայրոնի վերոհիշյալ Առաջաբանը այդ օրերում մի ուժգին ահագանք էր Եվրոպայի մեջ մեր ազգի զարթոնքին ու դատին նվիրված: Նրանով Բայրոնը ասպարեզ էր իջնում որպես Հայաստանի

ԲԱՆԱՏԵՂԾԱԿԱՆ ՀԱՆՃԱՐՆ ՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԸ Ձորջ Բայրոն - 230



եւ հայ ժողովրդի ազատագրության մեծ ջատագով»:

Թոմաս Մուրն այս «Առաջաբան»-ը գտավ մեծ բանաստեղծի թղթերում եւ հրապարակեց նրա կենսագրության մեջ, որտեղից էլ թարգմանվեց գրեթե բոլոր քաղաքակիրթ ազգերի լեզուներով ու տարածվեց աշխարհով մեկ:

Կան պոետական հանճարի՝ հայ ժողովրդի մեծ բարեկամը եւ հայ գրքի ու հայ մշակույթի փութեռանդ քարոզիչը լինելու այլ վառ վկայություններ եւս: Այսպես՝ Բայրոնի կենսագիրը նրա հետ 1823 թ. մայիսի 17-ին կապված մի դեպք է արձանագրել. «Բայրոնը իր գրույցից առաջ ներկա եղողներից յուրաքանչյուրին ընծայեց հրաժեշտի մի փոքրիկ հուշանվեր. մեկին՝ մի գիրք, մյուսին՝ իր կիսարձանի մի տպագիր օրինակը՝ ըստ Լորենսո Բարոլինիի (Lorenco Bartolini), իսկ տիկին Բ-ին (Բլեսինգտոն - Յ. Բ. Ա.)՝ Հայ քերականության օրինակներից մեկը, որի թերթերի վրա նշանակված էին իր ձեռագիր դիտողությունները»:

Մասնակից լինելով «Քերականություն հայերեն եւ անգլիական» դասագրքի կազմմանը՝ Բայրոնը նպատակադրվել էր իր եվրոպացի հայրենակիցներին ուսուցանել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի լեզուն, սեր եւ հետաքրքրություն վառել նրանց մեջ առ այդ ժողովրդի հայրենիքն ու մշակույթը: Նա դասագրքում գետեղել էր բազմաթիվ նմուշներ մեր հին եւ միջնադարյան գրականությունից՝ նպատակ ունենալով օտարագի ուսանողներին հնարավորություն տալ ծանոթանալու մեր մշակույթի նշխարներին:

Բանասեր Երիզ Մագեյը (եւ ոչ միայն նա) փորձել է գտնել Բայրոնի՝ հայերով հափշտակված լինելու պատճառները. Մագեյը գրում է. «Նա (Բայրոնը) սիրում էր հարգում էր այն բոլոր ազգերին, որոնց սիրելի էր անկախության ոգին: Այս էր գուցե հայերի նկատմամբ ունեցած իր հիացմունքի բանալին, որովհետեւ նա գտավ նրանց մեջ մի ազգ, որին բռնությունն ու ազգության կորուստը չէր կարող աղավաղել կամ ընկճել, մի ազգ, որ հակառակ իր պարտության՝ անաղարտ է պահել իր տրադիցիաների վեհությունը եւ իր հին համոզմունքների գեղեցկությունը»:

Երիցս իրավացի է Դաշտենցը, երբ ասում է, որ Բայրոնի մեծ առավելությունը նաեւ այն էր, որ նա իր օրինակով ոչ միայն հակադրվեց հետադիմական, կրոնական միստիկայով տարված արեւմտաեվրոպա-

կան հայագետներին՝ զարգացման նոր հունի մեջ դնելով հայագիտությունը Արեւմտյան Եվրոպայում, այլեւ մատնանշեց, որ արեւելյան մի փոքր ժողովուրդ կարող է իր ստեղծած մշակույթով օրինակ հանդիսանալ Արեւմուտքի մեծ ժողովուրդների համար: Նա, առաջիններից մեկը, ցույց տվեց, որ միշտ չէ, որ Արեւմուտքը պետք է հանդես գա սովորեցնողի եւ ուսուցչի դերում, այլ նրան անհրաժեշտ է երբեմն շատ ուսանելի բաներ սովորել Արեւելքից: Բայրոնը Վենետիկից Լոնդոն է ուղարկել հայկական հին աղբյուրներից կատարած մի շարք կարեւոր թարգմանություններ՝ անգլիացի ջենտլմեններին հրավիրելով իրենց տգիտությունը թոթափել՝ սովորելով դրանցից:

Բայրոնի անունը հռչակավոր դարձրեց է թե՛ կղզին, թե՛ միաթարյան մենաստանը եւ թե՛ Հարություն Ավգերյանին: Վերջինիս «Ինքնապատում օրագրության» մեջ կարդում ենք. «Վանքում նրա ուսանելը հռչակեց վանքի անունը եւ մանավանդ իր ուսուցչի անունը, եւ բազմաթիվ անգլիացիք ու այլազգիներ գալիս էին վանք նրան տեսնելու»:

Մինչ օրս Սուրբ Ղազարում կա լորդ Բայրոնի սենյակը, որը միաբանության թանգարանի մասն է կազմում, սենյակում ցուցադրված է նրա յուղանկարը: Բանաստեղծի անունով մինչեւ հիմա կա մի փոքր բլրակ, որտեղ աճում են ձիթենիներ. հետաքրքրվողները կարող են այցելել այնտեղ:

Անշուշտ, Բայրոնի գործերը թարգմանվել են հայերեն: Նրա առաջին խանդավառ թարգմանիչը եղել է Ղեւոնդ Ալիշանը. վերջինիս ձեռամբ է տեղի ունեցել անգլիացի տարագիր բանաստեղծի մուտքը հայ գրասեր իրականություն:

Մերազնյա մտավորականները տարբեր առիթներով մամուլի հրապարակումներով ու առանձին գրքերով անդրադարձել են Բայրոնի եւ հայ ժողովրդի կապերին, շատ դրվատական տողեր եւ հուզիչ բանաստեղծություններ ընծայել նրան, հրատարակել նրա նամակները, թարգմանություններն ու նշանավոր «Առաջաբան»-ը Հայաստանի մասին:

Բայրոն - հայ ժողովուրդ առնչություններին նվիրված առաջին ամփոփ ուսումնասիրությունը նշանավոր գրող, թարգմանիչ, բանասեր Խաչիկ Դաշտենցի վերոհիշյալ «Բայրոնը եւ հայերը» գիրքն է՝ լույս ընծայված 1959 թ., որն էլ հիմք է դարձել մեզ համար այս ակնարկը գրելիս:

Հրայր ԲԱՆՅԱՆ (ԱՐՄԵՆՅԱՆ)
Բանասիրական գիտ. թեկնածու

ԵՐԻԱՏՈՆՅԱ ԶԱՅԱՍԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Զրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 15.06.2018թ.

Տպաքանակ՝ 2100
Գինը՝ 50 դրամ